ՀՏԴ 338(479.224):338(479.243)

# ԳՆԱՃԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Եվգենյա Հայրիյան**
**տ.գ.թ., դոցենտ**
**Արցախի Պետական Համալսարան**
**Արցախ**

***Անոտացիա***

*Ինչպես Աբխազիայում, այնպես էլ Արցախի Հանրապետությունում գնաճի դրսևորման կարևոր առանձնահատկությունը կապված է սեփական արժույթ չունենալու, հետևաբար նաև անկախ դրամավարկային քաղաքականություն չունենալու հանգամանքի հետ: Գնաճը նշված հանրապետություններում կախված է ինչպես ՌԴ-ում և ՀՀ-ում վարվող դրամավարկային քաղաքականությունից, հանրապետություններում վարվող ինքնուրույն հարկաբյուջետային քաղաքականությունից, այնպես էլ քաղաքական անկայուն դաշտում գտնվող պետությանը բնորոշ գնաճի առաջացման պատճառներից:*

***Բանալի բառեր՝*** *գնաճ, տնտեսական աճ, գնաճի կառավարում, տնտեսական քաղաքականություն*

Ներկայիս պայմաններում յուրաքանչյուր պետության տնտեսական քաղաքականության իրականացման արդյունավետությունը պայմանավորված է տվյալ պետության ներսում արձանագրված գնաճի ցուցանիշով: Բնակչության բարեկեցության ապահովման նպատակով իրականացվող սոցիալ-տնտեսական բազմաբնույթ ծրագրերը գնաճի բարձր մակարդակի պատճառով իրենց վերջնական արդյունքին կարող են չհասնել: Այս տեսանկյունից շատ երկրներում գնաճի արդյունավետ կառավարումը հանդիսանում է պետության տնտեսական քաղաքականության կարևոր բաղադրիչի՝ դրամավարկային քաղաքականության իրականացման հիմնական պատճառ: Կախված երկրների զարգացվածության աստիճանից, համաշխարհային շուկայում որոշ ապրանքների գների մակարդակից գնաճը տարբեր դրսևորումներ է ունենում:

Անցած երեք տասնամյակում համաշխարհային տնտեսությունը բնութագրվում էր գնաճի տեմպի դանդաղումով: Եթե 1980-ական թվականներին գնաճի մակարդակը զարգացած երկրներում կազմում էր միջինը 9%, ապա ներկայումս նշված ցուցանիշը տատանվում է 2-3%-ի սահմաններում: Գնաճի փաստացի ցուցանիշը գրեթե միշտ համընկնում է նշված երկրների Կենտրոնական բանկերի կողմից սահմանված գնաճի նպատակային ցուցանիշի հետ: Զարգացող երկրներում գնաճի բարձր տեմպերը անցած երեք տասնամյակում նույնպես դանդաղել են, ընդ որում զարգացող երկրներում գնանկման տեմպերն ավելի արագ էին, քան զարգացած երկրներում, ինչի արդյունքում կրճատվել է զարգացած և զարգացող երկրների գնաճի մակարդակների միջև ճեղքվածքը:

Գնաճն իր ուրույն դրսևորումներն ունի Արցախի Հանրապետությունում և Աբխազիայի Հանրապետությունում: Երկու հանրապետություններում գնաճի դրսևորման կարևոր առանձնահատկությունը կապված է անկախ դրամավարկային քաղաքականություն չունենալու հանգամանքի հետ: Արցախի Հանրապետությունում և Աբխազիայի Հանրապետությունում որպես այդպիսին չի իրականացվում դրամավարկային քաղաքականություն, պետությունները, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, չունեն ինքնուրույն դրամական միավոր: Նշված պետություններն իրենց վրա են կրում համապատասխանաբար ՀՀ Կենտրոնական բանկի և ՌԴ

Կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ազդեցությունը:




Գծապատկեր1. Տնտեսական աճի և գնաճի դինամիկան Աբխազիայում 2008-2017թթ.[38]

2008-2017թթ ընկած ժամանակահատվածում Աբխազիայի տնտեսությունում արձանագրվել է միջինը 111.3 % տնտեսական աճ, սպառողական ապրանքների գների ինդեքսի միջին տարեկան 9.3%-ի պայմաններում: Նշված ժամանակահատվածում Աբխազիայում տնտեսական աճի առավել բարձր տեմպեր են արձանագրվել մինչև 2010 թվականը, որից հետո տնտեսական աճի տեմպերը դանդաղել են և 2017 թվականին այն կազմել էր 100.3%: Գնաճի ցուցանիշը 2008-2017թթ իր առավելագույն դրսևորումն է ունեցել 2008 թվականին՝ կազմելով 119.2 %, որից հետո գնաճի ցուցանիշը կայունացել էր և տատանվել 8-9%-սահմաններում, իսկ 2017 թվականի գնաճի տեմպը դանդաղել է՝ կազմելով 4%: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճի և գնաճի տեսանկյունից տնտեսության համար ճգնաժամային տարին համարվում է 2013 թվականը, երբ 1.1% տնտեսական անկման պայմաններում տնտեսությունում արձանագրվել է 7.8% սպառողական ապրանքների գների աճ: Անցած տասը տարիների ընթացքում Աբխազիայում տնտեսական աճի և գնաճի միջև միջին տարեկան ճեղքվածքը կազմել է 2 տոկոսային կետ:

Արցախի Հանրապետությունում 2008-2017թթ միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 10.4%, իսկ գնաճը՝ 4.3%: Նշված ժամանակահատվածում Արցախի տնտեսության համար ոչ բարենպաստ տարին 2010 թվականն էր, երբ տնտեսությունում արձանագրված գնաճի ցուցանիշը գերազանցել էր տնտեսական աճի ցուցանիշին 3.4 տոկոսային կետով:




[38] http://ugsra.org/abkhaziya-v-tsifrakh

Գծապատկեր 2. Տնտեսական աճի և գնաճի դինամիկան Արցախի Հանրապետությունում 2008-2017թթ[39]

2008-2017թթ Արցախի Հանրապետությունում միջին տարեկան գնաճի փաստացի ցուցանիշը 5 տոկոսային կետով զիջել է Աբխազիայում արձանագրված գնաճին: Անցած տասը տարիների ընթացքում Արցախի Հանրապետությունում տնտեսական աճի և գնաճի միջև միջին տարեկան ճեղքվածքը կազմել է 6, որը 4 տոկոսային կետով ավել է Աբխազիայում նույն ժամանակաշրջանում արձանագրված ցուցանիշից: Անցած երկու տարիներին Արցախի Հանրապետությունում գրանցվել է համապատասխանաբար 1.5% և 0.5% գնանկում, ինչի շնորհիվ առավել շոշափելի էր հանրապետությունում արձանագրված տնտեսական աճի ազդեցությունը բնակչության բարեկեցության վրա:

2008-2017թթ ընկած ժամանակահատվածում Աբխազիայում պարենային ապրանքների գների ինդեքսի միջին տարեկան աճը կազմել է 9.7%: Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների գնաճն իր առավելագույն դրսևորումն է ունեցել 2010 թվականին, իսկ ամենացածրը՝ 2017 թվականին, ընդ որում 2017 թվականին պարենային բոլոր ապրանքատեսակներում նախորդ տարվա համեմատ արձանագրվել է գների մակարդակի իջեցում: Պարենային ապրանքների մեջ առավել բարձր գնաճ է արձանագրվել մսեղենի, ձկնեղենի, հրուշակեղենի, հացի ու հացամթերքի գծով, իսկ ցածր գնաճ է արձանագրվել բուսական յուղի, կաթի ու կաթնամթերքի գծով: Ոչ պարենային ապրանքների գների ինդեքսի միջին տարեկան աճը կազմել է 9,8%, առավելագույն և նվազագույն ցուցանիշները արձանագրվել են 2008 և 2017 թվականներին՝ կազմելով համապատասխանաբար 19,2% և 3.3%, իսկ ծառայությունների գների ինդեքսի միջին տարեկան աճը անցած տասը տարիների կտրվածքով կազմել է 8.9%:




Գծապատկեր 3. Պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների ինդեքսի դինամիկան Աբխազիայում 2008-2017թթ[40]

[39] www.stat-nkr.am/տարեգրքեր
[40] http://ugsra.org/abkhaziya-v-tsifrakh




Գծապատկեր 4. Պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների ինդեքսի դինամիկան ԱՀ-ում 2008-2017թթ[41]

2008-2017թթ ընկած ժամանակահատվածում Արցախի Հանրապետությունում պարենային ապրանքների գների ինդեքսի միջին տարեկան աճը կազմել է 3.8%, ոչ պարենային ապրանքներինը՝ 4%, իսկ ծառայությունների գների միջին տարեկան աճը՝ 3.6%: Նշված ժամանակահատվածում տվյալ ապրանքատեսակների գծով արձանագրվել են ինչպես գնաճային, այնպես էլ գնանկումային երևույթներ: Պարենային ապրանքների գծով առավելագույն գնաճը արձանագրվել է 2010 թվականին՝ կազմելով 16.4%, իսկ 2015 թվականին արձանագրվել է 2.1 տոկոս գնանկում: Ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գնաճի առավելագույն ցուցանիշ արձանագրվել է 2009թ՝ կազմելով համապատասխանաբար 12.8% և 11.3 %: Վերջին երկու տարիներին վերջիններիս գծով տեղի է ունեցել գնանկում: Պարենային ապրանքների կազմում առավել մեծ գնաճ է արձանագրվել թեյի, սուրճի , կաթնամթերքի, ոգելից խմիչքների, ծխախոտի, ձվի գծով, իսկ առավել ցածր գնաճ՝ բանջարեղենի, կենդանական և բուսական յուղի գծով, ընդ որում շաքարավազի գծով նշված ժամանակահատվածում միջին տարեկան կտրվածքով արձանագրվել է գնանկում:




Գծապատկեր 5. Պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների միջին տարեկան գնաճը Արցախի Հանրապետությունում և Աբխազիայում

[41] www.stat-nkr.am/տարեգրքեր

2008-2017թթ պարենային, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գնաճը Աբխազիայում Արցախի Հանրապետության հետ համեմատած դրսևորվել է ավելի բարձր: Գնաճի միջին տարեկան ճեղքվածքը Արցախի Հանրապետության նկատմամբ կազմել է համապատասխանաբար 5.9, 5,8 և 5,3 տոկոսային կետ: Եթե անդրադառնանք երկու հանրապետություններում տասը տարիներին արձանագրված տնտեսական աճի տեմպերին, ապա տնտեսական միջին տարեկան աճը Աբխազիայում կազմել է 11.3%, որը 0.9 տոկոսային կետով ավելի բարձր էր Արցախի Հանրապետությունում արձանագրված տնտեսական աճի տեմպից:

Այսպիսով՝ տնտեսական աճի բարձր տեմպերին զուգահեռ Աբխազիայի տնտեսությունը բնորոշվում է նաև գնաճի բարձր մակարդակով, որն էլ խոչընդոտում է տնտեսության առավել արագ զարգացմանը և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Ինչպես Աբխազիայում, այնպես էլ Արցախի Հանրապետությունում գնաճի դրսևորման կարևոր առանձնահատկությունը կապված է անկախ դրամավարկային քաղաքականություն չունենալու հանգամանքի հետ: Երկու հանրապետություններում չի իրականացվում դրամավարկային քաղաքականություն, սակայն վարվում է ինքնուրույն հարկաբյուջետային քաղաքականություն:

Արդյունքում, գնաճի դրսևորումները Աբխազիայում և Արցախում կախված են ինչպես համապատասխանաբար ՀՀ-ում և ՌԴ-ում վարվող դրամավարկային քաղաքականությունից, հանրապետություններում վարվող ինքնուրույն հարկաբյուջետային քաղաքականությունից, այնպես էլ քաղաքական անկայուն դաշտում գտնվող պետությանը բնորոշ գնաճի առաջացման պատճառներից:

Գնաճի ձևավորման պատճառները կարելի է դասակարգել մի կողմից օբյեկտիվ և սուբյեկտիվ, մյուս կողմից էլ արտաքին ու ներքին: Ըստ որում, օբյեկտիվ պատճառները, իրենց հերթին, կարող են ունենալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ազդակներ: Վերլուծելով գնաճի դրսևորումները երկու հանրապետություններում, կարելի է եզրակացնել, որ ձևավորված գնաճի պատճառները կախված են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններից: Այս պարագայում, լինելով մեծամասամբ ներմուծող երկրներ, Աբխազիայի և Արցախի Հանրապետությունները ընդունում են այն գները, որոնք ձևավորվում են համաշխարհային շուկայում: Միաժամանակ, այս օբյեկտիվ պատճառը շատ դեպքերում դիտարկվում է միակը բարձր գների մակարդակի ձևավորման պայմաններում, հատկապես միջազգային գների բարձրացման պարագայում: Գների ձևավորման վրա ազդում են նաև ներքին գործոնները, որոնք հիմնականում դրսևորվում են ներքին շուկայում անառողջ մրցակցային պայմանների տեսքով: Աբխազիայի և Արցախի Հանրապետությունների արտահանման և ներմուծման հիմնական գործընկեր երկրները համապատասխանաբար Ռուսաստանի Դաշնությունն ու Հայաստանի Հանրապետությունն են, հետևաբար գնաճային ճնշումները մեծ մասամբ պայմանավորված են նաև նշված պետությունների կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությամբ: Այս տեսանկյունից կարևոր է, որ վերջիններիս կողմից գնաճի կառավարման քաղաքականության մշակման գործընթացում հաշվի առնվի նաև Արցախի Հանրապետության և Աբխազիայի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշները, ինչը հնարավորություն կտա ավելի արդյունավետ կազմակերպել գնաճի կառավարման գործընթացը:


**РЕЗЮМЕ**

**Сравнительный анализ инфляции в Абхазии и в Республике Арцах**

**Евгения Айриян**

**Ключевые слова:** инфляция, экономический рост, управление инфляцией, экономическая политика

Как в Абхазии, так и в Республике Арцах, важная особенность инфляции связана с отсутствием собственной валюты и, следовательно, отсутствием независимой денежно-кредитной политики. Инфляция в упомянутых республиках зависит от денежно-кредитной политики, проводимой как в России, так и в Армении, проводимой в республиках независимой бюджетной

политики, а также от причин инфляции, которые характерны для стран с политической нестабильностью.


**REZUME**

**Comparative analysis of inflation in Abkhazia end the republic of Artsakh**

**Yevgenya Hayriyan**

**Key words:** inflation, economic growth, inflation management, economic policy

Both in Abkhazia and in the Republic of Artsakh an important peculiarity of inflation is due to the lack of own currency and, consequently, the lack of an independent monetary policy. Inflation in the above-mentioned republics depends on the monetary policy pursued in Russia and in the Republic of Armenia, the independent fiscal policy implemented in the republics, as well as the reasons for the inflationary nature of the political unstabled states.